

Մուրադ Մ. Հասարթյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՍՈՒՐԲ ՍՈՖԻԱՅԻ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՏՐԳԱՏ ԱՆԵՑՈՒ ԿՈՂՄԵՑ*

1961 թվականին, երբ լրացավ մայրաքաղաք Անիի 1000-ամյակը, Խորհրդային Հայաստանում այդպես էլ չնշվեց այդ հիշարժան տարեթիվը և միայն անցյալ տարի՝ 2011 թ., արդեն անկախ Հայաստանում ոգեկոչվեց միջնադարյան Հայաստանի հռչակավոր մայրաքաղաքի 1050-ամյակը:

Անին գտնվում է պատմական Շիրակում, Ախուրյան գետի աջ ափին, եռանկյունաձև հրվանդանի վրա, V դ. եղել է Կամսարական իշխանների ամրոցը, IX դ. անցել է Բագրատունիներին, որոնք 961 թ. Կարսից այստեղ տեղափոխեցին Հայաստանի մայրաքաղաքը:

Անիի ճարտարապետական կերպարը, առաջին հերթին, ձևավորվեց իր եկեղեցիների շնորհիվ: Քաղաքն ունեցել է հարյուրից ավելի եկեղեցի և մատուռ¹:

Սա բավական մեծ թիվ էր, և այդ պատճառով միջնադարում Անին անվանվել է



Գ (Գ) քաղաք, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012



«հազար ու մեկ եկեղեցիների քաղաք»: Դրանցով է բնորոշվում X-XI դդ. կազմավորված և մինչև XIII դ. հարատևած Անիի ճարտարապետական դպրոցը, որի մշակած ոճական ուղղությունները, շենքերի տիպերը, հարդարանքը լայնորեն տարածվել են ողջ Հայաստանում²:

Անիի ճարտարապետական

ՎԵՄ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.01.2012:

1 Տե՛ս Կ. Մաթևոսյան, Անի: Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Եր., 1997, էջ 162-173:

2 Տե՛ս Paolo Cuneo, L'architettura della scuola regionale di Ani nell' Armenia medievale, Roma, 1977.

դպրոցի նվաճումները կապված են միջնադարյան Հայաստանի խոշորագույն ճարտարապետ Տրդատի անվան հետ: Անիում նա կառուցեց Մայր տաճարը (989-1001 թթ.), «Գազկաշեն» Ս. Գրիգոր զվարթնոցատիպ եկեղեցին (1001-1010 թթ.) և բազմաբսիղ կենտրոնագմբեթ Ս. Փրկչի եկեղեցին (1036 թ.): Տրդատն իր ստեղծագործությունների քանակով ու բարձր արվեստով բացառիկ տեղ է գրավում հայ մշակույթի պատմության մեջ: Հայ մյուս խոշոր ճարտարապետ, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու կառուցող Մանուելը և Տրդատն այն եզակի արվեստագետներն էին, որոնք իրենց տաղանդի ուժով ստիպել են հայ պատմիչներին, աշխարհիկ և հոգևոր բարձրաստիճան մեկենասներին հիշելուց բացի, գրել նաև նրանց աշխատանքների մասին³:

Տրդատի տաղանդը հիմնականում դրսևորվեց Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաքում, և դա է պատճառը, որ մասնագիտական գրականության մեջ նրան անվանում են «Անիի գլխավոր ճարտարապետ»⁴: Նրա ստեղծագործական կյանքը հանգամանորեն լուսաբանվել է բազմաթիվ հոդվածներում ու գրքերում, գրվել են առանձին մենագրական ուսումնասիրություններ⁵:

Ժամանակագրական կարգով Տրդատի՝ մեզ հայտնի առաջին վավերական գործը Արգինայի Կաթողիկեն է, որը նա կառուցել է Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի պատվերով (գահակալել է 973-992 թթ.)⁶: Արգինայի Կաթողիկեի շինարարության ավարտից հետո Տրդատը հրավիրվեց Անի՝ Հայաստանի մայրաքաղաք, որտեղ նրան Սմբատ Բ Տիեզերակալը հանձնարարեց շատ պատասխանատու և պատվավոր գործ՝ կառուցել ամենայն հայոց Մայր տաճարը (ծրագրված էր կաթողիկոսությունը Արգինայից տեղափոխել Անի):

Ստեփանոս Տարոնեցին նկարագրում է, թե ինչպես Սմբատ Բ Տիեզերակալը 977 թ. գահակալությունից անմիջապես հետո խոշոր շինարարական գործունեություն է ծավալում՝ Ախուրյանից մինչև Ծաղկոցաձոր. պարսպապատում է Անին, ընդարձակում քաղաքի տարածքը և Տրդատին հանձնարարում Անիի Մայր տաճարի կառուցումը⁷:

Սմբատ Բ Տիեզերակալի օրոք Տրդատը հասցնում է միայն հիմնադրել Մայր տաճարը, որի շինարարությունը, սակայն, ընդհատվում է 989 թ. արքայի վաղահաս մահվան պատճառով: Դա համընկավ մեկ այլ իրադարձության հետ. ըստ Ստեփանոս Տարոնեցու՝ նույն թվականին (իսկ այլ աղբյուրների համաձայն՝ 986 թ.) երկրաշարժից կործանվում է համաշխարհային ճարտարապետության գլուխգործոց Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթը, և լուրջ վնասվում են շենքի պատերը⁸: Տաճարը կառուցել էր Հուստինիանոս Ա կայսրը 532-537 թթ. ճարտարապետներ Անթիմոս Տրալացու և Իսիդոր Միլեթացու ձեռքով⁹:

Սուրբ Սոֆիայի տաճարի նորոգման և նոր գմբեթի կառուցման գործն իրակա-

3 Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1978: Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Պատմություն տիեզերական, Եր., 2000:

4 **I. Strzygowski**, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, Band II, S. 590.

5 Տե՛ս **Գ. Լևոնյան**, ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը, «Էջմիածին», 1949, N 1-2, էջ 345-372: **Ս. Ճևահիրձեան**, Տրդատ ճարտարապետ Հայոց, «Անի», Պեյրուք, 1952, էջ 345-372: **Ս. Մնացականյան**, Վարպետաց վարպետներ. Մանուել, Տրդատ, Մոմիկ, Եր., 1982, էջ 77-142: **К. Л. Оганесян**, Зодчий Трдат, Ереван, 1951.

6 Տե՛ս Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան, Եր., 2002, էջ 430:

7 Տե՛ս **Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի**, նույն տեղում, էջ 240:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 309-310:

9 Տե՛ս **Всеобщая история архитектуры в 12 томах. Том 3. Москва-Ленинград, 1966, с. 42.**

նացնում է Տրդատը: Թե ի՞նչ հանգամանքների բերումով է նա այդ ժամանակ գտնվել Կոստանդնուպոլսում, հայտնի չէ: Սակայն Բյուզանդիայի մայրաքաղաքի Մայր տաճարի վերականգնման գործը Տրդատի կողմից իրականացվելու փաստն այնքան բացառիկ է եղել, որ Ստեփանոս Տարոնեցին իր «Պատմության» մեջ բավական մանրամասն անդրադառնում է դրան: Նա գրում է, որ հզոր երկրաշարժից «... Կոստանդնուպոլսի մեծաշուք, բազմապայծառ և հրաշատեսք զարդաքանդակները, սյուները և պատկերները, վիթխարի մեծության եկեղեցիները փլուզվեցին ու քարուքանդ եղան. նույն ինքը՝ Սոֆիան, որ Կաթողիկեն էր, վերից վար հերձվեց և երկուսի բաժանվեց: Հունաց աշխարհի արհեստավոր ճարտարապետները մեծ ջանք թափեցին այն վերստին նորոգելու համար: Այնտեղ էր գտնվում նաև Հայոց քարագործ ճարտարապետ Տրդատը, որը հանճարի իմաստությամբ պատրաստելով կառույցի կաղապարը՝ տալիս է շինվածքի նախագիծն ու կառուցման սկիզբ դնելը, որի հիման վրա կառուցվեց առավել գեղեցկատեսք, քան նախկինն էր»¹⁰:

Բյուզանդացի ժամանակագիրները նույնպես անդրադարձել են այս իրադարձությանը, նշելով, որ 992 թ. «վերականգնվում է Մեծ եկեղեցու գմբեթը: Ավերվելուց չորս տարի հետո այն վերականգնում է մի հայ ճարտարապետ»¹¹:

Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթը շենքի՝ կայունության տեսանկյունից թույլ մասն է եղել: Ուստի մոտ 32 մ տրամագծով այս խոշոր գմբեթը ավերվեց կառուցումից ընդամենը 21 տարի հետո¹²: Հեղինակ ճարտարապետներն այլևս ողջ չէին, և գմբեթը վերականգնեց մեկ այլ ճարտարապետ՝ Իսիդոր Կրտսերը: Եվ հենց վերջինիս կառուցած գմբեթն էր, որ չդիմացավ X դ. երկրաշարժին:

Տրդատը պատվով իրագործեց իրեն տրված բարդ հանձնարարությունը: Եվ դա այն դեպքում, երբ տաճարի շինանյութն աղյուսն էր, որը միջնադարում Հայաստանի մոնումենտալ շենքերի կառուցման ժամանակ չէր կիրառվում: Տրդատի կառուցած գմբեթը դիմացավ հազարամյակից ավել և կանգուն է մինչև օրս:

Այստեղ Տրդատ Անեցին կիրառեց աղետալի երկրաշարժերին ենթակա Հայաստանի ճարտարապետների դարավոր փորձը: Ու թեպետ Սուրբ Սոֆիայի գմբեթը գրեթե երեք անգամ մեծ էր հայկական եկեղեցիների գմբեթներից, Տրդատը ցուցաբերեց նաև ճարտարագետի տաղանդ՝ կիրառելով Հայաստանի մեծաթռիչք կամուրջների շինարարության փորձը: Օրինակ՝ հենց իր օրոք կառուցված Անիի մեծ կամուրջն Ախուրյան գետի վրա ունի 30 մետրից ավելի թռիչք:

Տրդատը ոչ միայն վերականգնեց Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթը, այլև հիմնովին վերանորոգեց և ամրացրեց ողջ կառույցը, որովհետև, ինչպես նշում էր պատմիչը, Կաթողիկեն «վերից վար հերձվեց և երկուսի բաժանվեց»¹³: Տրդատը Բյուզանդական կայսրության Մայր եկեղեցուն փաստորեն նոր կյանք և նոր կերպար է պարգևում, որը հատուկ շեշտում է Ստեփանոս Տարոնեցին՝ տաճարը «կառուցվեց առավել գեղեցիկ, քան նախկինն էր»¹⁴:

Ճարտարապետության պատմության համար կարևոր է նաև պատմիչի նշած այն փաստը, որ Տրդատը նախօրոք պատրաստել է վերականգնման նախագիծը

10 Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, նույն տեղում, էջ 310:

11 M. Edouard de Muralt, Essai de chronographie Buzantine, St. Petersburg, 1855, p. 573.

12 Տե՛ս Բաիե, Византийское искусство, СПб, 1888, с. 45.

13 Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, նույն տեղում, էջ 310:

14 Նույն տեղում:

մանրակերտի ձևով: Հավանաբար, այդ աշխատանքի համար մրցույթ է եղել, և Տրդատի նախագիծը պատվիրատուի՝ հայազգի Վասիլ Բ կայսրի կողմից հավանություն ստանալուց հետո միայն ճարտարապետն իրավունք է ունեցել իրականացնելու իր մտահղացումը:

Հայկական ճարտարապետությունում եկեղեցական շենքերի քարե մանրակերտները պատրաստվել են վաղ միջնադարից մինչև XVIII դարը: Այս խնդրին հատուկ ուսումնասիրություն նվիրած իտալացի գիտնական Պաոլո Կունեոն հայկական միջնադարյան մանրակերտները ստորաբաժանում է չորս տիպի՝ ա) նվիրատվություն, բ) մասունքատուփ, գ) ճակտոնազարդ (ակրոտեր), դ) մակետ-նախագիծ¹⁵: Առաջին երեք տիպերը հիմնականում ընդհանրացված կամ նույնիսկ պայմանական ձևերով են արտահայտում եկեղեցական շենքի հորինվածքը, կերպարը: Իսկ նախագիծ-մանրակերտները համեմատաբար հարազատ են կառուցվող շենքի ծավալային լուծմանը (թեպետ, շատ դեպքերում, շինարարության ընթացքում այն էական փոփոխություններ է կրում):

Մինչև Տրդատը Հայաստանում մակետային նախագծումը նվազագույնն արդեն երեքհարյուրամյա պատմություն ուներ: Այսպես օրինակ, Հայաստանի պատմության թանգարանում պահվող, Սյունիքում (Անգեղակոթ) գտնված VII դ. քարե մանրակերտը ամենայն մանրամասնությամբ արտահայտում է կենտրոնազմբեթ եկեղեցու հորինվածքը, որի պատճառով այն որոշակի շենքի նախագիծ է համարվում¹⁶:

Հայաստանում նվիրատվական և ճակտոնազարդ մանրակերտներից մի քանիսը նույնպես վերարտադրում են կառուցվող շենքի ճատարապետությունը: Այդպիսին են, օրինակ, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու, Հառիճավանքի, Հաղպատի և Գանձասարի վանքերի պատերին քանդակված կամ ճակտոնների գազաթներին տեղադրված մանրակերտները:

Ինքը՝ Տրդատը, հետագայում ևս մանրակերտ է կիրառել՝ «Գագկաշեն» Ս.Գրիգոր զվարթնոցատիպ տաճարի կառուցման ժամանակ տեղադրելով այն նվիրատվական քանդակում՝ Գագիկ Ա Բագրատունի թագավորի ձեռքին: Մինչդեռ, մակետային նախագծումը Եվրոպայում առաջին անգամ կիրառվել է միան XV դ., երբ Բրունելեսկին 1420 թ. Ֆլորենցիայի Սանտա Մարիա դել Ֆիորե տաճարի գմբեթի կառուցման մրցույթին ներկայացրեց դրա փայտե մոդելը¹⁷: Իսկ հաջորդը եղավ Միքելանջելոն, որը XVI դ. Հռոմի Ս. Պետրոս տաճարի շինարարության ավարտի համար ներկայացրեց գմբեթի իր նախագծի մակետը, սկզբում՝ կավից, ապա փայտից¹⁸: Մինչ այդ Եվրոպայում եկեղեցական շենքերը պատկերվել էին միայն որմնանկարներում ու խճանկարներում:

Ուստի Պաոլո Կունեոն գրում է. «Հայ ճարտարապետների օգտագործած քարե մանրակերտները զարմանալիորեն կանխում են հետագոտման և աշխատանքի այն եղանակը, որը, ինչպես հայտնի է, պետք է իրագործվեր և զարգացվեր Վերածննդի ճարտարապետների կողմից»¹⁹:

15 Տե՛ս **Paolo Cuneo**, Les modeles en pierre de l'architecture armenienne, REArm, tome VI, Paris, 1969, p. 201.

16 Տե՛ս **Paolo Cuneo**, նույն տեղում, էջ 225: Տե՛ս նաև՝ **Ա. Երեմյան**, Անգեղակոթում գտնված գմբեթավոր կառույցի մանրակերտը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, N 10, էջ 71-83:

17 Տե՛ս Всеобщая история архитектуры в 12 томах, том 5, Москва, 1967, с. 62.

18 Տե՛ս նույն տեղում, էջ 214:

19 **Paolo Cuneo**, Les modeles en pierre de l'architecture armenienne, p. 223.

Սուրբ Սոփիայի տաճարի նոր գմբեթը կառուցելիս Տրդատը չկրկնեց նախկինը, այլ թե՛ ճարտարապետական, թե՛ կոսմոսոլոգիկ միանգամայն նոր լուծումով իրականացրեց այդ բարդ գործը: Նա գմբեթի թմբուկը, ի տարբերություն հայկականների, կառուցեց բավական ցածր, որը զգալիորեն թեթևացրեց գմբեթի ընդհանուր ծանրությունը: Այնուհետև տաճարի գմբեթի կիսաալոբոսը հենեց 20 լայնաթիչք, գազաթում փոխհաստվող կամարների վրա: Իսկ թմբուկի՝ բոլորածև պատի միջկամարային հատվածներում քառասուն լուսամուտ բացեց՝ դրանով նույնպես թեթևացնելով գմբեթակիր քառակուսու վրայի բեռը: Մեծաքանակ պատուհանները միաժամանակ առատ լուսավորության աղբյուր էին և երկնքից կախված գմբեթի պատրանք էին ստեղծում: Այս ինքնատիպ և համարձակ լուծումները միջնադարյան եկեղեցական ամենամեծ գմբեթի կառուցման ժամանակ իրենց արդարացրին, և տրդատաշեն գմբեթը կանգուն է մինչև օրս:

Հետաքրքիր է, որ բյուզանդական կայսրության Մայր տաճարը այլ առնչություններ էլ ունի հայկական իրականության հետ: Ըստ Վարդան Արևելցու՝ հայերը Հուստինիանոսի օրոք «...գնել են Սուրբ Սոփիի արևմտյան դուռը որպես հիշատակ Հայաստանի համար»²⁰: Ստեփանոս Տարոնեցին նույնպես հայտնում է, որ Կոնստանդնուպոլսի Սուրբ Սոփիա տաճարի Ավագ դուռը «... մինչև օրս էլ անվանվում է Գուռն Հայոց»²¹: Տաճարը Հայաստանի հետ մեկ այլ կապ ևս ունի. նրա ներքը զարդարված է վաղբրիստոնեական բարձրարվեստ խճանկարներով, որոնց թվում նաև՝ ս. Գրիգոր Լուսավորչին պատկերող²²:

Սուրբ Սոփիա տաճարի նորոգումը և գմբեթի կառուցումը ավարտվեց 992 թ.²³: Երեք-չորս տարի ապրելով և աշխատելով իր հզորության գագաթնակետում գտնվող Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում, որի մշակույթը, հատկապես՝ արվեստն ու ճարտարապետությունը ծաղկում էին ապրում, Տրդատը հաղորդակից եղավ այդ բնագավառների նվաճումներին: Այս բոլորը նպաստեցին նրա՝ որպես արվեստագետի ու ճարտարապետի, վարպետության վերելքին, որն արտահայտվեց Հայաստան վերադառնալուց հետո նոր ստեղծագործություններում, հատկապես Անիի Մայր տաճարում: «Բայց այս բոլորի հետ միասին մենք նրա արվեստում ոչ միայն չենք տեսնում բյուզանդական ճարտարապետության ինչ-որ նշաններ, այլ նույնիսկ հայկական հողում այդ ոճի մեկնաբանման փորձ»²⁴:

Տրդատը, Կոստանդնուպոլսում մեծ հռչակ ու համբավ ձեռք բերելով, 993 թ. վերադարձավ հայրենիք և ձեռնամուխ եղավ իր իսկ սկսած պատասխանատու աշխատանքի՝ Անիի Մայր տաճարի շինարարության շարունակմանը:

20 Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Եր., 2001, էջ 125:

21 Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, նշվ. աշխ., էջ 129:

22 Տե՛ս Ս. Ընտանիք, Գրիգոր Լուսավորչի կենդանագիր խճանկարը Ս. Սոփիայի մեջ, «Բազմավեպ», 1955, էջ 191-194, 1957, էջ 279-281:

23 Տե՛ս Մ. Eduard de Muralt, Essai de chronographie Byzantine. p. 573.

24 К. Л. Оганесян, Зодчий Трдат, с. 100.

Summary

THE RESTORATION OF CONSTANTINOPLE'S HAGIA SOPHIA BY ARCHITECT TRDAT ANETSI

Murad M. Hasratyan

One of the works of medieval Armenia's greatest architects, Trdat was the restoration of the destroyed dome of Hagia Sophia in Constantinople following an earthquake in 980. Armenian historian Stepanos Taronetsi, including also a Byzantium chronicler notes that he restored the basilica's dome in the year 992.

While restoring Hagia Sophia's dome, Trdat did not rebuild it according to the original but rather applied innovative architectural and construction solutions for that complicated process. In contrast to Armenian churches, he built the dome arch much lower, which alleviated its weight and rebuilt the west side of the dome with 20 dome ribs. He built 40 windows which also made it lighter and gave it the illusion of being suspended from the sky. These unique and bold solutions were justified as the dome is still standing today.